ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՏՄ-ՄԱԱՇՁԲ-20/04

ք. Իջևան «24» օգոստոսի 2020 թ.

«ՀՀ Տավուշի մարզպետարանը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՏԱՎՈՒՇԻՆ ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վաչագան Ապրեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.08.2020թ. թիվ 1308-Ն որոշման պահանջները կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթով **նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի հրետակոծության հետևանքով վնասված 77 տների վերականգնման և բարեկարգման աշխատանքներ**

Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 (քառասունհինգ) օրացուցային օր:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում գործող նորմերի պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 60 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ ծավալաթերթին համապատասխան, ինչպես նաև Պատվիրատուի պահանջով ՀՀ օրենքով սահմանված կարգով ներգրավել այլ կազմակերպությունների ենթակապալառուի կարգավիճակով:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը: Անհրաժեշտության դեպքում ներգրավել նախագծանախահաշվային փաստաթղթեր մշակող կազմակերպությանը՝ նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված -365- օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __3___ օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _5__ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները ծավալաթերթին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **58791500 (Հիսունութ միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից 9798779 (ինը միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

**5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30000000 (Երեսուն միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[30] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[30] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[31]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող

---

[31] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ Տավուշի մարզպետարան | ՏԱՎՈՒՇԻՆ ԲԲԸ |
| Հասցե՝ ք. Իջևան, Սահմանադրության 1 | ք. Բերդ, Գետափնյա 8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ Տավուշի մ/ճ |
| Հ/Հ 900371001604 | Հ/Հ 2477800380600000 |
| ՀՎՀՀ 07611324 | ՀՎՀՀ 07800472 |
| Արման Գևորգյան | Գրիգորի Բեգլարյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«24» օգոստոսի 2020 թ. կնքված*
*ՀՀՍՄ ԱՄՆ-ԷՇՁԲ-20/04 ՍՄՆ պայմանագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ*

«ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի հրետակոծության հետևանքով վնասված 77 տների վերականգնման և բարեկարգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N | անուն ազգանուն | անհրաժեշտ աշխատանք | բնակավայր |
|---|---|---|---|
| 1 | Վարդազարյան Արամ | Տանիքի (164 մ²) վերականգնում, պատուհանների տեղադրում 3 հատ (6,6 մ²) | Այգեպար |
| 2 | Վիրաբյան Վլադիմիր | Տանիքի (184 մ²) վերականգնում, պատուհանի փոխարինում 1 հատ (2,2 մ²), հենապատի վերականգնում 2.1 մ³, ավտոտնակի տանիքի փոխարինում 42 մ | -----,,,----- |
| 3 | Այվազյան Սերժիկ | Տանիքի (194 մ²) վերականգնում, պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), սենյակների կոսմետիկ վերանորոգում | -----,,,----- |
| 4 | Հոհաննիսյան Հարություն | Տանիքի (160 մ²)պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), սենյակների կոսմետիկ վերանորոգում | -----,,,----- |
| 5 | Խաչատրյան Հրաչիկ | Տանիքի (119 մ²) վերականգնում, պատուհանների փոխարինում 3 հատ (6,6 մ²), շքամուտքի ծածկի փոխարինում 5 մ² | -----,,,----- |
| 6 | Վարդազարյան Վանիկ | Տանիքի (174 մ²) վերականգնում, պատուհանների փոխարինում 3 հատ (6,6 մ²) | -----,,,----- |
| 7 | Աբազյան Ծաղիկ | Տանիքի (110 մ²) վերականգնում, արտաքին հարդարում, պատուհանների փոխարինում 3 հատ (6,6 մ²) | -----,,,----- |
| 8 | Գրիգորյան Անատոլի | Տանիքի (128 մ²) վերականգնում(անհրաժեշտ շին. աշխատանքներով), արտաքին հարդարում, 3 պատուհանի փոխարինում (6,6 մ²), ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով), բազալտե աստիճանների կառուցում 10 մ² | -----,,,----- |
| 9 | Ադամյան Սամվել | Տանիքի (131 մ²) վերականգնում, տանիքի ճակատային պատի կառուցում պեմզաբլոկներով 5.3 մ³, 26,5 մ², շքամուտքի ծածկի փոխարինում, արտաքին հարդարում, պաշտպանիչ պատի կառուցում 30 մ² | -----,,,----- |
| 10 | Արզումանյան Լյուսյա | Տանիքի (162 մ²) վերականգնում, օժանդակ շինության տանիքի փոխարինում 40 մ², սանհանգույցի վերականգնում, երկաթ-բետոնե ծածկի իրականում 4 մ³, պատուհանների փոխարինում 3 հատ (6,6 մ²) | -----,,,----- |
| 11 | Բաբաջանյան Ռոբերտ | Տանիքի (219 մ²) վերականգնում, ավտոտնակի և օժանդակ շինության ծածկի փոոխարինում 48 մ², օժանդակ շինության կառուցում պեմզաբլոկներից 8,4 մ³ | -----,,,----- |
| 12 | Անդրեասյան Պայծառ | Տանիքի (150 մ²) վերականգնում(անհրաժեշտ շին. աշխատանքներով), արտաքին հարդարում, ապակեպատում, ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով), օժանդակ շինությունների տանիքի փոխում 130 մ² | -----,,,----- |
| 13 | Վիրաբյան Սամվել | Տանիքի (194 մ²) վերականգնում, Պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), դռան տեղադրում 1 հատ, պատերի կառուցում տուֆից 3,12 մ³, արտաքին պատերի սվաղ 64 մ² | -----,,,----- |

| | | | |
|---|---|---|---|
| 14 | Կիզոդյան Սամվել | Տանիքի (160 մ²) վերականգնում, տանիքի ճակատային մասի կառուցում պեմզաբլոկով 6 մ³, երկաթ-բետոնի միջնորմերի տեղադրում 0,9 մ³, ավտոտնակի տանիքի փոխարինում 40 մ², օժանդակ շինությունների վերականգնում, պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²) | -----,,,----- |
| 15 | Համբարձումյան Ժորա | Տանիքի (138 մ²) վերականգնում, պատերի ուժեղացում մետաղական միջնորմերի տեղադրումով, երկաթ-բետոնե ծածկի կառուցում 20 մ², պատերի միաձուլում մետաղական գոտիով, ավտոտնակի կառուցում 20 մ², պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), դռան փոխարինում 1 հատ, աստիճանների թարմացում 15 հատ | -----,,,----- |
| 16 | Բուդուրյան Սարիբեգ | Տանիքի (112 մ²) վերականգնում, օժանդակ շինությունների վերականգնում, պատուհանների փոխարինում 2 հատ (4,4 մ²) | -----,,,----- |
| 17 | Բաղալյան Երվանդ | Տանիքի (130 մ²) վերականգնում, պատերի կառուցում կանոնավոր տուֆ քարից 4 մ³, պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), կից կառույցների տանիքի փոխարինում, աստիճանների թարմացում | -----,,,----- |
| 18 | Առաքելյան Օնիկ | Տանիքի (100 մ²)վերականգնում, օժանդակ շինությունների և փռան տանիքների փոխարինում 40 մ², պատերի ուժեղացում 4 մ³ միջնորմերի տեղադրումով, մուտքի դռան փոխարինում, ներսի դռների թարմացում, պատուհանների փոխարինում 6 հատ 13,2 մ²), պատուհանների թարմացում 3 հատ, աստիճանների թարմացում 20 հատ, կախովի առաստաղի կառուցում 6 մ², արտաքին և ներքին հարդարում | -----,,,----- |
| 19 | Անիկյան Բենիկ | Տանիքի փոխարինում (210 մ²) վերականգնում, արտաքին հարդարում | -----,,,----- |
| 20 | Գևորգյան Իվան | Տանիքի (148 մ²) վերականգնում, ծածկի վերականգնում երկաթ-բետոնով 20 մ², պատուհանների փոխարինում 4 հատ 8,8 մ²), արտաքին հարդարում, մուտքի դռան տեղադրում, օժանդակ շինությունների ծածկի փոխարինում 25 մ², աստիճանների վերականգնում 20 հատ | -----,,,----- |
| 21 | Բաղալյան Դավիթ | Պատերի կառուցում ուղիղ կտրվածքի տուֆ քարով 10 մ³, մետաղական միջնորմերի և գոտու կառուցում, պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), մուտքի դռան փոխարինում 1 հատ, սենյակների առաստաղի բետոնապատում 25 մ², տանիքի (154մ²) վերականգնում, պատերի արտաքին սվաղ | -----,,,----- |
| 22 | Սահակյան Գառնիկ | Տանիքի (235 մ²), դարպասի փոխարինում 10 մ², 8 պատուհանների ապակեպատում (17,6 մ²), պաշտպանիչ պատի կառուցում 56 մ², միջանցքի առաստաղի վերականգնում 42 մ², աստիճանների թարմացում, արտաքին հարդարում | -----,,,----- |
| 23 | Պետրոսյան Վարանցո | Տանիքի (166 մ²) վերականգնում, պատուհանների փոխարինում 3 հատ (6,6 մ²), մուտքի դռան փոխարինում | -----,,,----- |
| 24 | Մկրտումյան Միեր | Տանիքի (165 մ²) վերականգնում, օժանդակ շինության վերականգնում և տանիքի փոխարինում 12 մ², պատուհանների փոխարինում 2 հատ (4,4 մ²) | -----,,,----- |

| | | | |
|---|---|---|---|
| 25 | Մելքումյան Վովիկ | Տանիքի (170 մ²) վերականգնում, օժանդակ շինությունների վերականգնում 20 մ², պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), մուտքի դռան փոխարինում | -----,,,----- |
| 26 | Քերիմյան Գևորգ | Տանիքի (200 մ²) վերականգնում, նախամուտքի ծածկի վերականգնում 35 մ², պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²) | -----,,,----- |
| 27 | Առաքելյան Թամինգա | Տանիքի (205 մ²) վերականգնում, կից կառույցների և օժանդակ շինությունների վերականգնում,պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), դռան տեղադրում | -----,,,----- |
| 28 | Խաչատրյան Լարիսա | Տանիքի (150 մ²) վերականգնում, օժանդակ շինությունների տանիքի փոխում 25 մ², շքամուտքի ծածկի փոխարինում 14 մ², մուտքի տեղադրում, պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²) | -----,,,----- |
| 29 | Այվազյան Արթուր | Տանիքի (196 մ²) վերականգնում, կից կառույցի տանիքի փոխարինում 5 մ², պատի կառուցում տուֆ քարից 6 մ², պատուհանների փոխարինում 5 հատ (8,8 մ²), աստիճանների վերականգնում 15 հատ, պատերի արտաքին սվաղ 40 մ² | -----,,,----- |
| 30 | Սադյան Աշոտ | Տանիքի (120 մ²) վերականգնում, օժանդակ շինության վերականգնում 18 մ², փայտյա և ապակեպատ պատշգամբի ապամոնտաժում, պատերի ուժեղացում տուֆ քարով 20 մ², մետաղական միջնորմերի կառուցում, պատուհանների տեղադրում 3 հատ (6,6 մ²), մուտքի դուռ 1 հատ, արտաքին հարդարում | -----,,,----- |
| 31 | Անդրեասյան Վարդան | Տանիքի (219 մ²) վերականգնում, պատուհանների փոխարինում 4 հատ, պատերի կառուցում 20 մ², պատուհանի փոխարինում 3 հատ (6,6 մ²), մուտքի դռան փոխարինում | -----,,,----- |
| 32 | Յամուկյան Մկրտիչ | Տանիքի (170 մ²) վերականգնում (անհրաժեշտ շին. աշխատանքներով), արտաքին հարդարում, պատուհանի փոխարինում 2 հատ (4,4 մ²), ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով) | -----,,,----- |
| 33 | Առաքելյան Զոյա | Տանիքի (40 մ²) վերականգնում (անհրաժեշտ շին. աշխատանքներով), արտաքին հարդարում, պատուհանի փոխարինում 3 հատ (6,6 մ²), ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով) | -----,,,----- |
| 34 | Անիկյան Բենիկ | Տանիքի (220 մ²) վերականգնում(անհրաժեշտ շին. աշխատանքներով), արտաքին հարդարում, պատուհանի փոխարինում 3 հատ (6,6 մ²), ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով) | -----,,,----- |
| 35 | Մարդանյան Սամվել | Տանիքի (120 մ²) վերականգնում, արտաքին հարդարում, պատուհանի փոխարինում 2 հատ (4,4 մ²) | -----,,,----- |
| 36 | Ապրեսյան Զուլիետա | 2 պատուհանի փոխարինում (4,4 մ²) | -----,,,----- |
| 37 | Պապյան Եդվարդ | Տանիքի (210 մ²) վերականգնում(անհրաժեշտ շին. աշխատանքներով), արտաքին հարդարում, պատուհանի փոխարինում 3 հատ (6,6 մ²), ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով) | -----,,,----- |

| | | | |
|---|---|---|---|
| 38 | Անիկյան Նարգիզ | Տանիքի (185 մ²) վերականգնում(անհրաժեշտ շին. աշխատանքներով), արտաքին հարդարում, պատուհանի փոխարինում 2 հատ (4,4 մ²), ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով) | -----,,,----- |
| 39 | Անիկյան Արման | Տանիքի (228 մ²) վերականգնում, պատերի ուժեղացում, սենյակների առաստաղի երկաթ-բետոնե ծածկի կառուցում, ուժեղացման կոնստրուկտիվ փոփոխություններ, պատուհանների փոխարինում 4 հատ (8,8 մ²), մուտքի դռան փոխարինում, պատերի կառուցում պեեմզաբլոկով 40 մ², ներքին հարդարում, արտաքին հարդարում | -----,,,----- |
| 40 | Մելիքյան Մելանյա | Տանիքի (210 մ²) վերականգնում, պատշգամբի ապամոնտաժում, քարե պատի կառուցում ուղիղ կտվածքի տուֆով 40 մ², պատուհանի փոխարինում 4 հատ (8,8 մ²), մուտքի դռան փոխարինում | -----,,,----- |
| 41 | Անիկյան Արևիկ | Տանիքի (180 մ²) վերականգնում, արտաքին հարդարում, 2 պատուհանի փոխարինում (4,4 մ²) | -----,,,----- |
| 42 | Ուդումյան Սամվել | Տանիքի (153 մ²) վերականգնում, պատուհանների տեղադրում 2 հատ (4,4 մ²), առաստաղի երկաթ-բետոնե ծածկի վերականգնում 10 մ², ներսի դռներ 3 հատ, երկու ներքին հարդարում | -----,,,----- |
| 43 | Անիկյան Արշակ | Տանիքի (180 մ²) վերականգնում, պատերի ուժեղացում մետաղական միջնորմերով և ուղիղ կտրվածքի տուֆ քարի շարվածքով, 3 պատուհանի փոխարինում(6,6 մ²), ներքին հարդարում | -----,,,----- |
| 44 | Ղազարյան Ասկյար | Տանիքի (205 մ²) վերականգնում, պատերի ուժեղացում և վերականգնում, ներքին հարդարում, 2 պատուհանների փոխարինում (4,4 մ²) | -----,,,----- |
| 45 | Չորանյան Լորիս | Տանիքի (164 մ²) վերականգնում, կոնստրուկտիվ ամրացման աշխատանքներ, կից կառույցի ապամոնտաժում, տուֆ քարից պատի կառուցում 40 մ², պատուհանների փոխարինում 5 հատ (11 մ²), մուտքի դռան փոխարինում, աստիճանների թարմացում | Ներքին Կարմիրաղբյուր |
| 46 | Հարությունյան Էմմա | Կից կառույցի տանիքի նորոգում, վիտրաժի սվաղ 25 մ/ք, 3 պատուհանի փոխարինում (6,6 մ²) | -----,,,----- |
| 47 | Գալստյան Ռաֆիկ | Տանիքի (140 մ²) վերականգնում, 2 պատուհանի փոխարինում (4,4 մ²), ներքին հարդարում | -----,,,----- |
| 48 | Գրիգորյան Հրաչիկ | 6 մ² պատի կառուցում տուֆ քարով, 11 պատուհանի փոխարինում (24,2 մ²), երկու մուտքի դուռ, բազրիքի թարմացում, ֆասադի սվաղ 20x5, աստիճանների վերևի կախովի տանիքի փոխարինում, 12 հատ աստիճանի թարմեցում: | -----,,,----- |
| 49 | Շառյան Արսեն | Տանիքի (135 մ²) վերականգնում, 1 պատուհանի փոխարինում (2,2 մ²) | -----,,,----- |
| 50 | Ղահրամանյան Ալբերտ | 3 պատուհանի փոխարինում (6,6 մ²), արտաքին հարդարում, ապակեպատում, ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով) | -----,,,----- |
| 51 | Մելքումյան Վաչիկ | տուֆով պատի կառուցում 15 մ², 7 պատուհանի փոխարինում (15,4 մ²), ներքին հարդարում 15 մ² | -----,,,----- |

| | | | |
|---|---|---|---|
| 52 | Լալայան Մանյակ | 7 պատուհանի փոխարինում (15,4 մ²), հենապատի կառուցում, կախովի տանիքի փոխարինում 110 մ² | -----,,,----- |
| 53 | Լալայան Ցողիկ | ապակու փոխարինում, տանիքի մասնակի նորոգում | -----,,,----- |
| 54 | Վարդանյան Հենրիկ | Պատի կառուցում 24 մ², 4 պատուհանի փոխարինում (8,8 մ²), տանիքի մասնակի նորոգում | -----,,,----- |
| 55 | Ադամյան Մարսել | 3 պատուհանի փոխարինում (6,6 մ²), արտաքին հարդարում, ապակեպատում, ներքին հարդարում (անհրաժեշտ ծավալով) | -----,,,----- |
| 56 | Հարությունյան Համլետ | 3 պատուհանի փոխարինում (6,6 մ²), պատշգամբի առաստաղը և հատակի բետոնապատում, բազրիքի նորոգում | -----,,,----- |
| 57 | Հովհաննիսյան Գառնիկ | Տանիքի (160 մ²) վերականգնում, հատակի ճաքի վերացում, 1 պատուհանի փոխարինում (2,2 մ²) | -----,,,----- |
| 58 | Սիմոնյան Նավասարդ | 4 պատուհանի փոխարինում (8,8 մ²), մուտքի դուռ, կախովի տանիքի փոխարինում, դարպասի փոխարինում, արտաքին հարդարում | -----,,,----- |
| 59 | Իսրայելյան Ռաղիկ | 6 պատուհանի փոխարինում (13,2 մ²) | -----,,,----- |
| 60 | Հարությունյան Համլետ | Տանիքի (170 մ²) վերականգնում, 7 պատուհանի փոխարինում (15,4 մ²) | -----,,,----- |
| 61 | Ղուկասյան Գառնիկ | Տանիքի (160 մ²) վերականգնում, ջերմոց 130 մ² | -----,,,----- |
| 62 | Առաքելյան Ռաղիկ | Տանիքի փոխարինում, 1 մուտքի դուռ, 2 պատուհանի փոխարինում (4,4 մ²) , պատի կառուցում տուֆ քարով 3 մ² | -----,,,----- |
| 63 | Բաղալյան Ռոզա | Տանիքի (145մ²) վերականգնում | -----,,,----- |
| 64 | Գալստյան Սարո | 5 պատուհանի փոխարինում (11 մ²), մեկ Եվրոպատուհանի ապակիների փոխարինում, կից կառույցի կախովի տանիքի փոխարինում, վիտրաժի սվաղ | -----,,,----- |
| 65 | Հարությունյան Սվետլանա | Տանիքի փոխարինում, կից կառույցների տանիքի փոխարինում, պատի անկյունային հատվածի վերականգնում, 1 պատուհանի փոխարինում (2,2 մ²), 9 պատուհանի թարմացում և վերականգնում | -----,,,----- |
| 66 | Անդրանիկ Միրզոյան | 10 մ² տուֆից պատի կառուցում | Չինարի |
| 67 | Վաչագան Ծերունյան | Տանիքի (155 մ²) վերականգնում | -----,,,----- |
| 68 | Միրզոյան Լիդա | 15 մ² տուֆից պատի կառուցում | -----,,,----- |
| 69 | Գարեգին Սաղոյան | 8 պատուհանի փոխարինում (17,6 մ²) | -----,,,----- |
| 70 | Գրետա Դալլաքյան | 3 պատուհանի փոխարինում (6,6 մ²) | -----,,,----- |
| 71 | Սեյրան Միրզոյան | Տանիքի (175 մ²) վերականգնում, 4 պատուհանի փոխարինում (8,8 մ²) | -----,,,----- |
| 72 | Սաթենիկ Բաբայան | Տանիքի (140 մ²) վերականգնում, 3 պատուհանի փոխարինում (6,6 մ²) | -----,,,----- |
| 73 | Արշալույս Պետրոսյան | 1 պատուհանի փոխարինում, մուտքի դուռ, տանիքի մասնակի փոխարինում | -----,,,----- |
| 74 | Երվանդ Սաղոյան | 10 մ² պատի կառուցում, 5 պատուհանի փոխարինում, 5 պատուհանի փոխարինում (11 մ²) | -----,,,----- |

| | | | |
|---|---|---|---|
| 75 | Արտավազդ Սաղոյան | 2 պատուհանի փոխարինում (4,4 մ²) | -----,,,----- |
| 76 | Վարդան Սաղոյան | 20 մ² պատի կառուցում, 1 մուտքի դուռ, 1 ներսի դուռ, 15 մ² առաստաղի թարմացում, 5 պատուհանի փոխարինում (11 մ²) | -----,,,----- |
| 77 | Վանիկ Սաղոյան | Տանիքի (160 մ²) վերականգնում, 40 մ² պատի կառուցում, 10 պատուհանի ապակի | -----,,,----- |
| 78 | Սամվել Միրզոյան | 140 մ² պատի կառուցում, 2 պատուհանի փոխարինում (4,4 մ²), 55 մ² առաստաղի թարմացում, տանիքի մասնակի փոխարինում | -----,,,----- |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Տավուշի մարզի Այգեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Չինարի համայնքներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետարան
Հասցե՝ ք. Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900371001604
ՀՎՀՀ 07611324
Արման Գևորգյան

/ստորագրություն/
Կ. Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՏԱՎՈՒՇԻՆ ԲԲԸ
ք. Բերդ, Գետափնյա 8
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ Տավուշի մ/ճ
Հ/Հ 2477800380600000
ՀՎՀՀ 07800472
Վարազդատ Խաչատրյան

/ստորագրություն/

*Հավելված թիվ 2*
*« 24» օգոստոսի 2020 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՄԱԱՇՁԲ-20/04 ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի հրետակոծության հետևանքով վնասված 77 տների վերականգնման և բարեկարգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ընդհանուր աշխատանքներ | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը | 45 օրացուցային օր |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետարան
Հասցե՝ ք. Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900371001604
ՀՎՀՀ 07611324
/ Արման Գևորգյան
_____
/ստորագրություն/
Կ. Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՏԱՎՈՒՇՇԻՆ ԲԲԸ
ք. Բերդ, Գետափնյա 8
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ Տավուշի մ/ճ
Հ/Հ 2477800380600000
ՀՎՀՀ 07800472
Վաչագան Ալբերսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

*Հավելված N 3*
*« 24» օգոստոսի 2020 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՄԱԱՇՁԲ-20/04 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | 30000000 | 58791500 | 58791500 | 58791500 | 58791500 | 58791500 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետարան
Հասցե՝ ք. Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900371001604
ՀՎՀՀ 07611324
/ Արման Գևորգյան
_____
/ստորագրություն/
Կ. Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՏԱՎՈՒՇՇԻՆ ԲԲԸ
ք. Բերդ, Գետափնյա 8
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ Տավուշի մ/ճ
Հ/Հ 2477800380600000
ՀՎՀՀ 07800472
Վարչության նախագահ
_____
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*« 24» օգոստոսի 2020 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՄԱԱՇՁԲ-20/04 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*« 24» օգոստոսի 2020 թ. կնքված*
*ՀՀՏՄ-ՄԱԱՇՁԲ-20/04 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն